

# ՊԵՐԱ ՊՈՅԱՇԵԱՆՑԻ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ

1907 թուի նոյեմբերի սկիզբն էր:

Բժ. Վարշամեանը դալով իմ բնակարանս՝ լայտնեց, որ Պոօշեանցն արդէն Բագւումն է և կամենում է ինծ տեսնել:

Ահա անսպասելի մի լուր:

Զէս որ նոր կարդացել էի մի հայ լրագրի մէջ, որ Պոօշեանցը Ալէքսանդրապօլով անցել է Աշտարակ իւր առողջութիւնը վերականդնելու, դիմեցի ես այս հարցով պ. Վարշամեանցին:

—Այո՞ւ, նա գնացել էր Աշտարակ ու մի քանի օր է որ վերակարձել է Բագու և այժմ հիւանդ պառկած է իւր փեսայ Ստեփան Տիգրանեանցի բնակարանում, բացատրեց բժ. Վարշամեանցը:

Իսկոյն գնացի այցելութեան:

Ստեփան Տիգրանեանցի բնակարանը այդ միջոցին Տարգովայա փողոցումն էր, տիկին Տէր Յակոբեանի տան երկրորդ լարկում: Ելէքտրական զանգը քաշելուց յետոյ բնդառաջ դուրս եկաւ Պոօշեանցի մեծ դուստր՝ տիկին Տիգրանեանը:

— Այո, եկել է հալրս, հիւանդ է և պարկած է մի փոքր սենեակում. ախ, որքան լաւ կինէր, եթէ դուք համողէիք նորան գնալ դէպի փողոց նայող հիւսիսային սենեակը, որ աւելի բնդառակ է, ինդրեց ինծ տիկին Տիգրանեանցը և առաջնորդեց ինծ սեղանատան միջով մինչև այն սենեակն, ուր պառկած էր Պոօշեանցը:

Մտայ ներս. Պոօշեանցը ձգուած էր իւր մահճակալի վերայ, երեսը դէպի մասկ լուսամուտը, որ նալում էր դէպի տան բացը և որից հաղիւ մի 2—3 ժամ թափանցում էին արևի ճառագայթները:

— Էս հրտեղ ես, հէր օրհնուած, քանի ժամանակ է սպասում եմ քեզ, դիմեց ինծ Պոօշեանցը և մեկնեց իւր դողդոչուն և գալկացած ծեռքը.

— Եսպէս էլ բան կինք, շարունակեց նա. միքանի օր է վերադարձել ևմ Բագու, հիւսնդութիւնից չեմ կարողանում տանից դուրս դալ, իսկ իմ բաղմաթիւ ժանօթներից ոչ ոք, ոչ ոք չէ այցելում ինձ և չէ միսիթարում ինձ, կարօտ եմ կենդանի խօսքի:

Ներողութիւն խնդրելով՝ ես բացատրեցի, որ չգիտէի նորա անտկնիալ գալուստը և, ընդհակառակը, ես կարծում էի թէ նա Աշտարակումն է. Մի քանի սովորական հարց ու պատասխանից լեռոյ, պատրաստուեցի որ հարցնեմ նորա հիւանդութեան մասին, բայց Պոօշեանցը թէքուեց փոքրիկ սեղանի կողմը, վերցրեց զանդակը և հարեց:

Ներս մտաւ մի հայ կին, որ, ինչպէս յետոյ պարզուեց, նշանակուած էր միայն հիւանդին ծառայելու.

Հայ կինը, առանց պատուերի սպասելու, դրեց հողաթափները հիւանդի կախած ոտերի առաջ և ինքն անցաւ նորա կողմը՝ թերից բռնելու:

Այս շարժութերից հեշտ էր եղրակացնել, որ կինը արդէն գիտէր իւր անելիքը, արդէն վարժուած էր իւր դերակատարութեան մէջ: Հիւանդն զգուշութեամբ հազար հողաթափները և յենուած օգնական կնոջ վերայ՝ շատ դանդաղ գուրս գնաց սենեակից:

Ես մնացի միայնակ: Հազիւ անցաւ մի քանի րոպէ և ուժից ընկած Պոօշեանցը, նոյն կնոջ օգնութեամբ, վերադարձաւ սենեակ, շնչառապ նետուեց մահճակալի վերայ ու երկար ժամանակ չէր կարողանում հանգստացնել շնչառութիւնը, որ խօսի:

— Տեսնում ե՞ս, ահա այսպէս է իմ դրութիւնը, խօս մի բան էլ չկայ, բայց հարկադրուած շուտ շուտ պէտք է գուրս գնամ... ախորժակս վատ չէ, բայց կերածս չէ մնում... բարակ ու կցկտուր ձայնով արտասանեց Պոօշեանցը:

Այս խօսքերից արդէն յայտնի եղաւ Պոօշեանցի հիւանդութեան տեսակը և նորա վտանգաւոր դրութիւնը. փոքր խօսելուց յետոյ ես պատրաստուեցի հեռանալու հիւանդի բնակարանից:

— Քարքի՞՞լ, հիւանդու ձայնով դիմեց ինձ Պոօշեանցը՝ էրր ես հրաժեշտի ձեռքս մեկնել էի դէպի նա, Աստուած սի-

քես, չմոռանաս ինձ, շուտ շուտ արի մօտս, գիտեմ ծառա-  
յութեանդ գուցէ երբեմն արդելք լինեմ, բայց խնդրում եմ,  
մոռացութեան չտալ ինձ...

Մահնակալի մէջ նստած Պոօշեանցն արտասանեց այս  
խօսքերը, զլուկսը թեքեց ծախ ուսի վերալ աչքերը դէպի շած  
և ծախ ծեռքով զանդահարութեամբ նորից պատրաստուեց հայ  
կնոջը կանչելու...

Ես միամացրի, որ կայցելեմ և դուրս գնացի:

Երկու օրից լետոյ նորից այցելեցի Պոօշեանցին, որ չա-  
փաղանց ուրախացաւ և սկսեց զանդատուել ուրիշ ծանօթնե-  
րից:

— Երևակայիր քեզ, Գաբրիէլ, մի քանի օր առաջ, մարդի  
միջոցով խնդրել էի Գ. և Ե. քահանաներին, որոնք չոկ չոկ հա-  
զիւ միքանի բոպէով մտան մօտս ու այնուհետեւ էլ չեմ տես-  
նում նրանց երեսը... երևի ծանր է հիւանդի հետ ժամանակ  
անցնելը: Գիտե՛ս, որքան ծանօթ ունիմ այստեղ՝ Բաղւում, բայց  
նորանցից ոչ ոք չէ երևում, կարծես Սահարալի անապատում  
ենք:

Դէմքը թեքեց միւս կողմի վերայ և խոր մտածմունքի մէջ  
ընկաւ: Մի բոպէից լետոյ նորից շարունակեց իւր տրասունչը.

— Օտարը խոմ օտար է, բայց հարազաներս էլ կարծես  
օտարացել են ինձանից... մանել, ակեղեկանալ, հարցնել ուտելս,  
կամ խմելս... ոչ ոք... դարդակ բան է... երանի կամ կինս կեն-  
դանի լինէր, կամ ես մեռնէի կիսօս հետ միասին... դայրացած  
ու լուսահատ արտասանում էր հիւանդը:

Ակս խօսքերի վրայ ես չդիտէի ինչ պատասխան տամ,  
կամ ինչով միխթարեմ նորա կոտրուած սիրտը. ուսափ նորան  
հոգեպէս հանգստացնելու նպատակով կամեցայ հեռացնել նորա  
ուշքը ալդ տիխուր նիւթից, և առաջարկեցի բացատրել թէ ի՞նչ  
հանդամանքներից ստիպուած նա, Պոօշեանցը, վերշին անգամ  
ընկաւ Աշտարակ: Աղդ բոպէին նա արդէն բաւականին հանդրս-  
տացած էր և կարող էր հեշտութեամբ անցնել խօսակցութեան  
այլ նիւթիւ:

— Աշտարակ, հա ասեմ, զիտես, Գաբրիէլ, կինս որ մե-  
ռաւ, ես արդէն ինձ կենդանի չէի զգում, իմ գոյսթիւնս

ինծի չեր թւում, ուստի ես կամենում էի մեռնել և մշտնչենապէս հանդստանալ իմ կնոջ կողքին, Թիֆլիսում, Խոջիվանքի գերեզմանատանում կամ հանդէիլ իմ հայրենի հողում, իմ մանկական օրորանում, Աշտարակ գիւղում: Մտածեցի, որ իմ հայրենակիցները կճանաչեն ինձ... չեն թողնիլ անհետ կորչելու... մի քանի ժամանակ կեանք կունենամ, թող կեանքիս այդ ամենաչնին մասը անցկացնեմ իմ ծննդավայրում. ահա այդ մտքով էլ գնացի Աշտարակ. պատասխանեց հիւանդը և ըովպէական ընդհատումից լետոյ նորից շարունակեց խօսակցութեան թելք:

— Դորա համար, մտածեցի ես առաջարկել հայրենակիցներիս շինել հասարակութեան հաշուով երկու սենեակ, մինը զրադարանի համար, միւսը իմ բնակութեան համար, որ իմ մահից լետոյ կինէր էլի հասարակաց զրադարանի սեփականութիւն:

Ակս խօսքերի վրայ կանգ առաւ Պոօշեանցը, որովհետև զանդք կանչեց հայ կնոջը: Դուրս գնաց կմախք զարձած Պոօշեանցը՝ ոտերն իրար զարկելով, մէջքը կուացած և ապա նորից վերադառնալով ընկաւ մահնակալի մէջ և շնչասպառութիւնից հանդստանալուց լետոյ, նորից շարունակեց իւր պատմութիւնը:

— Ո՞րտեղ Ցնացի. հա, մի սենեակի վոխարէն ես խօստացայ տալ Աշտարակի հասարակութեան ընդ միշտ առաջին՝ իմ բոլոր գրեանքս, երկրորդ՝ իմ հեղինակութեան ժառանգական իրաւունքը, որից հասարակութիւնը կարող էր ունենալ մօտ 300 ռուրի տարեկան եկամուտ հիմնուելիք զրադարանի օգաին: Ես մտածեցի, որ եթէ այդ իրաւունքը թողնեմ իմ օրինաւոր ժառանգներին, իւրաքանչիւրին հաղիւ հասնի տարեկան 50 ռուրի, մի չնչին գումար, որ ստացողին առանձին օգուտ տալ չէ կարող, այն ինչ մի հասարակաց զրադարանի համար տարեկան 300 ռուրի մշտական եկամուտի աղբիւր՝ ունի մեծ նշանակութիւն: Ուստի խորհուրդս լայտնեցի մօտիկներիցս ոմանց ու ի՞նչ կասկած, գոտալ հաւանութիւն: Մնաց ընդհանրացնել գործը:

— Հէնց այդ միջոցին — շարունակեց հիւանդը — բո collegան ու իմ համագիւղացի բժիշկ Մնացական Յարութիւնեանցը ժա-

մանակաւորապէս գտնւում էր զիւղում և պատրաստւում էր տալ հասարակութեանը մի նաշկերոյթ։ Աշտարակումն էր նուև ինձ և քեզ քաջածանօթ բարեկամ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանցը, կտակիս համակրողներից մինր։ Տեսնում ես, հանգամանքները կարծես լաչող ելք էին խոստանում։ Ահա խնջոյքի ժամանակի...»

Այս խօսքի վերայ Պոօշեանցը տքալով և հեւարով էլիթեքուեց դէպի սեղանի վերայ դրած զանդը և ներս մտնող հայ կինը ալս անդամ ստացաւ հիւանդից պատուէր՝ բերել մի բաժակ կաթ։ Կաթը կամաց կամաց, կում կում, սկսեց խմել և նորից շարունակել իւր պատմութեան թելը, որ կարծես թէ իրան էլ հետաքրքրում էր և նա գոհ էր, որ ես առանց ծանձրանալու լոում էի ու ընկերակցում էի նորան։

—Հա, հացկերոյթի ժամանակ առաջարկուեց և իմ կենացը, ճառերի մէջ լիշեցին ներսէս կաթողիկոսին, Սմբատ Շահաղիզին ու այլ աչքի ընկնող աշտարակցիներին, պնդելով որ մեղպէսներն են Աշտարակին փայլ տուողը, նորա անունը բարձրացնողը, որ բախտաւոր են ներկայ աշտարակցիք, որ մեզ պէս հայրենակիցներ ունեն և ապագայ սերունդը երախտագիտութեամբ և հպարտութեամբ պէտք է լիշի Պոօշեանցների, Շահաղիզեանցների և այլոց անունները. մի խօսքով, բանը ի՞նչ երկարացնեմ, Գարրիկ, գիտես էլի թէ ալդ տեսակ հանգամանքներում, կարմիր ու ներմակ գինու բաժակներից լեացյ ի՞նչ բառեր են թնդում օդի մէջ։

—Մանաւանդ այնպիսի բանաստեղծական դիրք ունեցող տան մէջ, Քասախ գետի ծառազարդ ժայռի դադաթին, ուր դրած է բժ. Մնացական Յարութիւնեանցի տունը, ուր ալդ ճառերը արտասանւում էին, աւելացրի ես։

—Այս, այս, կամրջի գլխին, ախ ինչ հրաշալի պատկեր է այդ տեղ գարնան ժամանակ, կցեց Պոօշեանցը և շարունակեց իւր պատմութիւնը։ Հա, այդ ընդհանուր ոգևորութեամ ժամանակ ահա առաջարկուեց իմ կտակը։ Որքան հացկերոյթը շարունակուեց, հանդիսականները միահամուռ գովում գովարանում էին իմ լղացած միտքը և նազող պատրաստականութիւն էին լայտնում իրագործել կտակս, այսինքն շինել մի առւն Զ սենեակից

իւր պարագաներով՝ հասարակաց զբաղարանի և իմ բնակութեան համար, որի վերայ հաղիւ ծախսուէր 2000 ռուբլի ձաշկեցյթը վերջացաւ, հրաւիրեալները ցրուեցին:

Այսուեղ Պռօշեանցը խնդրեց, որ մի փոքր ընդհատումն լինի խօսակցութեան մէջ, որպէս զի կարողանայ շունչ առնել և ապա շարունակել.

—Հա, հետևեալ օրը, շարունակեց Պռօշեանցը, կազմուեց մի համախօսական, մէջը արծանազրուեց իմ կտակը և երեկեան ոգևորուած հասարակութեան խոստումները և ապա մի հաւատարիմ մարդու ծեռքով սկսեցին պրարտացնել զիւղում ստորագրութիւն ժողովելու։ Հէնց այդ աեղ երեւաց ներկայ աշատրակցիների ներքինը... ախ, ի՞նչ անեմ, Գարբիկը, հայս հալ չի, թէ չէ աշտարակցիներին նորից կնրկարազրէի... Համախօսականը ներկայացնում են մինին, որ պատասխանում է «Էհ, հերօրինած, չէր թողնի որ լուսանայ, ինչ էք առաւօտ. .», միւսը՝ թէ «Ճնյ կարելիս, առաջ պէտք է տանել այսինչ պարոնին, նա իշխան է, առաջ նա պէտք է ստորագրի»։ Երրորդը՝ թէ «Ես կամ ու կամ, ես նադդ եմ, դուք գեռ տարէք այս ինչ մարդուն...» չորրորդը՝ թէ «ամենոյն ուրախութեամբ կստորագրեմ, բայց հիմայ ժամանակ չունիմ, ծիս թամբած է, շտապում եմ զնալ Ավինագեղ, էնտեղից էլ Արարան, ուր մի ամսաշափ կուշանամ...» հինդերորդը՝ թէ «Էհ, ի՞նչ անենք թէ խոստացայ, բա հացիկերոյթի ժամանակ կասեն թէ չէ, համածայն չեմ, ո՞նց կլինի...», վեցերորդը՝ թէ եթէ ուրիշները կստորագրեն, ես էլ կստորագրեմ...» և այն և այլն։ Հապան, էն անիծուածները էս պէս օլին բերին զիխս և համախօսականը մնաց մի թղթի կտոր, որ ո՞վ գիտէ, քամին ո՞ր կողմի վերայ տարաւ։ Այսպէս վարուեց ինձ հետ այն Աշտարակը, որին ես զոհել եմ իմ կեանքի ամենաեռանդուն և ամենաթանգարին ժամանակը։ Զեռք վերցնելով Աշտարակից՝ ես լաւիտեան և ընդմիշտ դէն ծգեցի նորան և եկայ Բագու. զժգոնութեամբ վերջացրեց իւր պատմութիւնը Պերճ Պռօշեանցը։

Ժամանակը երեկոյեան դէմ էր, կերակուր բերին հիւանդի համար, ուստի ես հեռացայ և խոստացայ այցելել հետեւեալ օրը։

Միւս օր՝ սովորական ժամին ես մտայ Պռօշեանցի։

սենեակը։ Նոյն կացութիւնը, նոյն դրութիւնը, նոյն կենցաղն՝ ինչ որ երեկ. միայնակութիւն, բացակայութիւն հարազատների և ծանօթների, նաև բացակայութիւն խնամող բժիշկների։ Միայն հայ կինն էր, որ երբեմակի երևալով զանգի ծայնին, կատարում էր իւր դերը։

Սովորական ողջոյնից լետոյ ես նստեցի աթոռի վերայ, հիւանդի դէմ, որն այդ միջոցին ծորուած էր մէշքի վերայ մահակալի մէջ, ծեռքերն աշ ու ծախ կողմից դրած զլիսի աակարմիք ֆէսը քէչ աչքերի վերայ քաշած, լուռ նայում էր դէպի լուսամուտը։ Մի քանի րոպէից լետոյ ինքն իր լուսաթիւնը խախտելով սկսեց խօսել։

— Հաւատացնում եմ քեզ, Գաբրիէլ, որ ալս իմ անիմեալ հիւանդութեանս ժամանակ՝ միակ ու միակ միսիթարութիւնս արեւի նառագալթներն են, որ լուսամուտով ընկել են վրաս։ Բնութեան այդ հրաշալի պարգևնից անգամ ես զուրկ եմ, ըստորում սենեակս ունի ալնափսի մի դիրք և ալս միակ լուսամուտն ալնափս է դրած, որ արեւ իւր կենսապու ճառագալթները հաղիւ մի երկու ժամ կարողանում է ձգել իմ վերալ, իմ այրած, մաշուած սիրտս միսիթարելու... և մերզնք ալս միսիթարութիւնից կամենում են զրկել ինձ, կամենում են աեղափոխել հիւսիսային կողմը, իսկ ես ամենեին չեմ համածալնիլ և ալս սենեակս չեմ ձգիլ... մի քանի օր կեանք ունեմ, գոնէ արևն ինձ միսիթարի, ալս արեւի համար եմ ապրում... ապրելս այսուհետեւ ուրիշ նպատակ չունի...»

Նորից լուսահատութիւն, նորից խորհրդաւոր լուսութիւն, բայց խորհրդաւոր մտածմունքի և այդ լոփի րոպէին Պոօշեանցըն իւր խորն ընկած աչքերը և գունատ ու մաշուած դէմքը լանկարծ ինձ վերայ դարձնելով և ծեռքը մեկնելով արտասանեց կարծես իւր դաղտնի մաածմանց շարունակութիւնը։

— Ակար էլ ինչ ապրեմ է, ում համար ապրեմ... ո՞ր նրապատակիս համար ապրեմ... կինս մեռաւ... մեծ որդիս իւր անխոհեմ ուղղութեան համար յաւիտեան աքսոր գնաց, միւս զաւակներիս համար աւելորդ ծանծրութիւն եմ... էլ ո՞ւմ համար ապրեմ... չէ, ես պէսաք է մեռնեմ, ես ուզում եմ մեռնել, մեռնելն ուղղակի իմ ցանկութիւնս է... և ես հաս-

տատ գիտեմ, որ պէտք է մեռնեմ այս ցաւից. միայն կցանկալի արտեղ չմեռնել, որպէս զի այս սենեակը չկրցի... կինս որ մեռաւ թիվլիզում, նորա մահից յետով ոչ ոք զաւակներից չէր ուզում մտնել նորա սենեակը և ես հարկադրուեցալ փոխել բնակարանս։ Այս է իմ ցանկութիւնը, մեռնել և այս բնակարանում չմեռնել... Իմ շիրիմս պէտք է լինէր Աշտարակում, իմ մայրամունդ գիւղում, բայց ոչ իմ կարողութիւնս թող տուեց տուն շինել մեր գիւղում և ոչ Աշտարակի հասարակութիւնը կամեցաւ կասարել վերշին ցանկութիւնս—տաղ ինձ Յ արշին հող... Աշտարակցոյ վարմունքից յետով՝ արդէն ինձ համար բոլորովին միենոյն է թէ որ տեղ կամփոփեն իմ ոսկրներս, ալսաեղ՝ Բաղու, թէ մի այլ տեղ...

Ես գիտմամբ խառնուեցի խօսակցութեան մէջ, աշխատեցի ըստ առաջնոյն հեռացնել նորա ուշքն արդպիսի մտածմունքներից, որ չափաղանց վնասակար էին նորա հոգեպէս հանդստութեան համար. իսկ Պոօշեանցը հակառակեց.

— Զէ, Գարրիէլ, դու զգիտես իմ դրութիւնը, ապրելս ի զուր է և ես կմեռնեմ... միայն հեղինակութեանց ժառանգական իրաւունքի մասին և գրեանցս մասին, Աշտարակի գէպ-քից յետով, փոխել եմ մտադրութիւնս. Վճռել եմ յատկացնել արդ երկուսն էլ Ներսիսեան գպրոցին, որ ինձ դասահարակել է, կրթել և մնուցել։ Եւ արդէն խնդրել եմ Ստեփանին (իւր վեսայ, փաստաբան Տիգրանեանց Բագւում), որ այս մտքով մի կտակ շինի իմ անունից։

Քանիցս որ ալցել էի Պոօշեանցին, չէի հանդիպել նորա մօտ ոչ դեղօրայք և ոչ ինամատար բժիշկի, ըստ որում նորա խնամող հայ բժիշկները Զ. և Վ., հիւանդի ասելով, գնացել էին ս. Էջմիածին Վեհափառ Խրիմեանի թաղծանը հանդիսատես լինելու։ Այն ինչ հիւանդի դրութիւնը օրէցօր վատթրանում էր, իսկ տնալին դրութիւնը մնում էր անփոփոխ, չկար կարեռ հոգաստարութիւն, բժշկական խնամք, հոգեպէս հանգստութիւն և ալին, որոնք ներկայ հանգամանքում խիստ կարեար էին։ Ալդպիսի յարմարութիւնները կարելի էր դտնել միայն լաւ հիւանդանոցում։

Ուստի Պոյշեանցի խօսակցութիւնից օդուտ քաղելով՝ խօսք բացի հիւանդանոցի մասին, միայն վախենալով, թէ, մի գուցէ, Պոյշեանցի կողմից դժգուհութեան հանդիպեմ։ Իսկ նա, իմ սպասածին հակառակ, մեծ յօժարութիւն ցոյց առւեց, աւելացնելով որ իւրաքինները հակառակ են նորա հիւանդանոց դնալուն, որպէս զի չենթարկուեն քաղաքի «ասէկօսէին»։ Վերջին խօսքերը մտածողութեան և փոխադարձ խորհրդակցութեան առիթ եղան իմ և Պոյշեանցի մէջ։ Դարձնել ուշադրութիւն փողոցալին «ասէկօսէիներին» և թողնել հիւանդին անխնամ դրութեան մէջ, թէ հիւանդի դրութիւնը վասնգաւոր համարելով գերակշիռ համարել նորա անծնական շահերը։ Ես պնդում էի վերջին տեսակէտի վրայ և Պոյշեանցը լիովին համածալն էր ինձ հետ, ուստի երկուսով համածալնեցինք ի կատար ածել մեր որոշումը, այսինքն հիւանդ Պոյշեանցի անծնական շահերը գերադաս համարելով, տանել նորան (հիւանդին) մի բարեկարգ հիւանդանոց։

Իսկ ինչ կվերաբերի հարազատների ընդդիմութեանը, որ հիմնուած էր ասէկօսէիներից վախենալու վերալ, Պոյշեանցը ինքը չարաչար հակառակ էր թէ ասէկօսէիներին և թէ իւրայնների ընդդիմութեանը և վճռել էր անպայման գնալ դրա հակառակ։

Այնուհետև մնում էր ընտրել մի լարմարին հիւանդանոց։ Կանդ առայ դոքտոր Գալկինի հիւանդանոցի վրայ, բայց սաթանգ էր, օրական 3 ռուրի, որ Պոյշեանցի համար ծանր էր, ըստ որում նորա բոլոր դրամական կարողութիւնը ալդ միշոցին, նորա ասելով, հասնում էր ընդամէնը մօտ 200 ռուրի։

Հիւանդանոցի ընտրութիւնը մնաց հետևեալ օրուան և տուն վերադարձած, հեռախօսով ես, այնուամենալիւ, խընդրեցի դոքտոր Գալկինի համածալնութիւնը մի առանձին սենեակ լատկացնելու իւր հիւանդանոցում։ Երբ հետևեալ օրը նորից մտալ Պոյշեանցի ընակարանը, ալդտեղ հիւանդանոցի ընտրութեան հարցը և մանաւանդ գործի դրամական կողմը կրկին բեմ բարձրացան։ Եւ ալդ խորհրդակցութեան ժամանակ միտք ծագեց դիմել նաւթարդիւնաբերողների խորհրդի Սև

քաղաքի հիւանդանոցի վարչութեանը: Այդ հիւանդանոցը իւր փառաւրութեամբ տալիս է բոլոր յարմարութիւններ:

Մի կարևոր արդեկք էր միայն հանդիսանում մեր առաջ, որ եթէ Պոօշեանցին ընդունեն հիւանդանոցում, այդ շնորհը պէտք էր վերագրել Պոօշեանցի արժանապատութեանը, ըստ որում նաւթարդիւնաբերողների խորհրդի հիւանդանոցները նաւթալին գործերում ծառապղների համար են: Բայց խորհրդի գործերի կառավարիչը հանութեամբ ընդունելով մեր դիմումն, հարթեց ճանապարհը և ալսպիսով որոշուեց որ հետեւեալ օրը Պոօշեանցը ընդունուի Սև քաղաքի հիւանդանոցը ձրիապէս:

Գործի ալսպիսի ընթացքով Պոօշեանցը շատ գոհ էր, մինչև անդամ ուրախ: Այսաեղ հիւանդը չարաչար թախանձում էր ինձ որ վաղը նորան հիւանդանոց աանեմ ես և ոչ ալլ ոք. իսկ ես ամէն կերպ աշխատում էի համողել նորան, որ աւելի յարմար է եթէ տանեն իւրալինները: Այնուամենադիւ անկարելի եղաւ համածալնեցնել նորան, ուստի անճարացած և հիւանդին հանդստացնելու համար խօսք տուի վաղը գալու:

Վաղը կիւրակի էր, 1907 թուի նոյեմբերի 11. Արդէն առտուօտ է: Քանի մօտենում էր Պոօշեանցի մօտ զնալուս ժամը, այնքան աւելի էր ճնշում հոգիս, ըստորում զգում էի որ այս օրը մի տեսարան պէտք է բացուի, սպասում էի: Որ երկուստէք մի հակառակութիւն պէտք է երևան գալ, հիւանդը ամենայն ուժով պէտք է ծգտի դէպի հիւանդանոց, իսկ նորա հարազատները պէտք է ընդդիմադրեն նորան և ես այդ ընտանեկան տեսարանին ակամայ ներկայ պէտք է լինեմ: Ուստի ինձ համար գնալ անտանելի էր, իսկ չգնալ՝ անկարելի:

Գնացի, Մտայ Պոօշեանցի սենեակը: Հիւանդն արդէն ինձ սպասում էր, գալուստս յախնի էր և նորա հարազատներին:

Հիւանդը պառկած դրութիւնից նստեց մահճակալի վերայ և սկսեց ժողովել իւր իրեղէնները. սեղանի վրայից վերցրեց մանր պատկերները և ալլ մանրիկ առարկաներ, ծալեց թաշկինակները, շապիքները և միւս սպիտակեղէնը և ալլն: Այդ բոլորը դարսեց մի առ մի իւր թեթև արկդի մէջ, որ չարծես պատրաստում է մի երկար ճանապարհորդութեան:

Ես հեռու նստած աթոռի վրայ, զիտում էի հիւանդի գործունկութիւնը և մտածում թէ հիւանդ մարդը, որքան էլ ցանկալիս լինի իւր մահը, ախուամենանիւ ծեռքից բաց չի թողնի կենաց յուսով նշովը, Ի՞նչ էր մտածում ալդ խորհըրդաւոր ըսպէին Պոօշեանցը, ես չգիտեմ. միայն երկուս էլ լուռ էինք:

Զանդակիր զարկեց. ներս մտաւ հայ կինը և պատուէր ստացաւ հազբնել հիւանդին իւր հանդերձը և ժողովել ու կապել նոր անկողինը:

Այդ միջոցին ներս մտան երկուսը հիւանդի զաւակներից և աղաչում էին հօրը չգնալ հիւանդանոց, մինչև անգամ չէին թողնում որ նա հագնուի: Բայց Պոօշեանցը անդրդուելի կերպով ընդդիմանում էր: Վերջապէս հագնուած և հայ կնոշ վերայ լենուած դուրս եկաւ սեղանատուն: Ես գնացի նորա հետքից:

Սեղանատունը շրջապատեցին Պոօշեանցին նորա զաւակները և ուժով արգելում էին նորան դուրս դնալ տնից: Պոօշեանցը խիստ զալրացած ընդդիմանում էր: Բարձրացաւ աղմուկ, զժողոհութիւն, աղաչանք, բողոք, ամէն տեսակ զգացմանց արտալալտութիւն:

Իմ զրութիւնս անտանելի էր: Հէնց ալդ ըսպէին ես նրկատեցի դահլիճում բժիշկ Վարշամեանցին և խիստ խնդրեցի որ նա փոխարինի ինձ և հիւանդին տանի լանձնի հիւանդանոց: Որովհետև հիւանդանոցի վարչութեանը անծանօթ էին և Պոօշեանցը և բժ. Վարշամեանցը, ուստի տուի նորանց հարկաւոր տոմս և ինքս իսկոյն և եթ հեռացայ Տիղրանեանի բընակարանից:

Ունկոյս անելով աղերսանքն ու արգելքները, Պոօշեանցը դուրս է պրձնում ուժով ու առանց օգնութեան իշնում է երկրորդ լարկից աստիճաններով մինչև Տարգովի փողոց և արտեղ, դրան առաջ նստում: Ապա իշնում է բժ. Վարշամեանցը և կառքով տանում հիւանդին լանձնում է հիւանդանոցին:

Նոյեմբերի 14 ալցելութեան դնացի Պոօշեանցին. նորա համար դատարկել էին բժիշկների ընդունարան—սենեակը, ուր միայնակ պառկած էր հիւանդը: Սենեակը փառաւոր, մաքուր,

լուսաւոր, կահաւորուած, բժշկական և կենցաղավարական հոգատարութիւնը օրինակելի ինքը հիւանդը շատ զոհ էր ամէն բանից, միայն ծանծրանում էր որ իւր բաղմաթիւ ծանօթներից այցելում էր հիւանդանոցում ամէն օր միայն բժ. Վարշաւ մեսնր: Չեմ խօսում Պուշեանցի զաւակների և վեսայի մասին, որ իւրաքանչիւր օր այցելում էին: Հիւանդի ծանծրութիւնը սաստկանում էր մանաւանդ դիշերները, երբ մնում էր միայնակի: Ուստի նա խնդրում էր բժ. Վարշաւմեանին որ դիշերնենը մնայ նորա մօտ: Այդ անկարելի էր:

Չնայելով հրաշալի հոգատարութեան, հիւանդի ովմը օրեցօր սպակասում էր, ալ ևս նա չէր կարողանում նստել մահնակալի մէջ, բայց լիշողութիւնը, դատողութիւնը խիստ լաւ էր:

Հասաւ նոյեմբերի 22, հինգշարթին: Հիւանդի դրութիւնը կրիաթքական էր, այլևս ոչ մի լոյս, դիշերը անցրեց անքուն և անշարժ և նոյեմբերի 23-ին 1907 թուի, ուրբաթառաւոտեան ժամի 8 և 30 բոպէին ալ ևս չկար Պերճ Պուշեանցը:

Գնաց լաւիտենականութեան դիրկը հայ գրականութեան չարքաշ մշակներից մինը, որ ծնուեց աղքատութեան մէջ և մեռաւ օտարութեան ու չքաւորութեան մէջ: Թող այսուհետեւ նորա բազմաթիւ երկերը լիշեցնեն նորա անունը:

Ուրբաթ, նոյեմբերի 23 երեկոյեան դէմ, խօնաւ եղանակին, Սև քաղաքի կողմէց Տելէֆոննի փողոցով դանդաղ ընթանում էր երկու ծի լծած մի սև դիմակառք: Հայ կառապանը սև զգեստ հագած, կամաց կամաց շարժում էր դիմակառքը երկար ու լայն փողոցով: Դադաղի մէջ՝ դիմակառքի վերայ անշարժ հանգստանում էր մի կորացած, ոսկը դարձած դիմակը Այդ Պերճ Պուշեանցն էր:

Նորա ետեից գնում էին հաղիւ 2—3 կառք հանգուցեալի հարազատներով: Ամբոխը դեռ կարծում էր թէ Պուշեանցը դեռ ևս կենդանի է, դորա համար էլ գաղտնի էր պահում իւր լարգանքը, սպասում էր որ հիւանդը անշնչանալ, դիմակ դառնայ, որ ըստ ալնմ արժանանալ լարգանքի:

Հասաւ դիմակառքը Տարգովի փողոց և Պերճ Պուշեանցը

լոիկ մնջիկ անցաւ այն տան կողքից, որտեղից 12 օր առաջ աղմկալող կերպով դուրս եկաւ դէպի Սև քաղաքի հիւանդանոցը:

Ահա դիակառքը կանգ առաւ հայոց եկեղեցու առաջ և Պերճ Պոչեանցը՝ իւր փոքրիկ տնակի մէջ՝ մտաւ հայոց եկեղեցին գիշերելու ախտելու: Նա ալժմ միայնակ է, բայց վաղը կսկսի նորա դիակի լարգանքը:

Արդարև շարաթ օրը տեղական լրագրների մէջ դուրս եկաւ Պոչեանցի մահուան յալտարարութիւնը և այդ օրը պատարագի ժամանակ, եկեղեցում ասեղ ծգելու տեղ չկար, այնքան շատ էր լարգողների թիւը:

Պատարագը վերջացաւ. եկեղեցու բազում լուսանկարով հանեցին հանգուցեալի պատկերը և ապա դադաղը նորից բարձրանալով դիակառքի վրայ հոգեոր երգերով շարժուեց դէպի երկաթուղու կայարանը Թիֆլիզ գնալու:

Ժողովրդի խուռն բազմութիւնը, կառքերի ահագին խումբը Տելէֆոնի լայն փողոցում կանգնացրել էին շարժումը, կանգ էին առել և ծիաքարշերը: Տիսուր հանդէսը դանդաղաբալ լառաջ էր գնում դէպի երկաթուղին: Հասարակութիւնը ոտով էր գնում ի պատիւ հանգուցեալի...: Շատերը, մանաւանդ կանալք, խօսակցում էին թէ ի՞նչպէս, ինչ ծեռվ և երր յաւերժացնեն հանգուցեալ Պոչեանցի լիշատակը:

Երկաթուղու գնացքը պատրաստ կանգնած է: Մալրի վագոնը Պոչեանցի համար է: Նա գնում է Թիֆլիզ իւր վաղենի փափազը, իղծը լրացնելու, այն է մշտնշենապէս հանգստանալու իւր կնոջ կողքին...: Նորա ցանկութիւնը կատարեց նորա փեսայ Ստեփան Տիգրանեանցը, որին Պոչեանցը իւր կենդանութեան ժամանակ չափազանց լարգում էր:

Թէև հարկ էր ալստեղ դնել վերջակէտ, բայց որպէսզի մահանկարը լրիւ լինի, ինծ հարկաւոր է լիշատակել և այն յարդանքը, որ գալիս էր հեռագրների միջոցով: Այս հեռագրները օրինակ են, թէ ո՞րպիսի լարգանք է վայելում միեւնոն անծնաւորութիւնը իւր կենդանի և մեռած ժամանակ: Ահա նմուշի համար մի երկուսը:

## Բագուից 1 դեկտեմբերի:

«Հալրենի դրական անդաստանի բազմավաստակ մշակներից մէկն էլ պահասեց: Արարատեան շինականներին յաւերժացնող մեծ լուսանկարչի թարմ գերեզմանի առաջ երախտագիտութեամբ զլուխ ենք խոնարհեցնում», Յակոբ Խոշամիրեանց, Արէլ Տէր Բաղդասարեան, Դարեղին Շահնշան, Սարդիս Տէր Զաքարեան, Յարութիւն Արարութիւն, Սարսէն Բալալիեան, Անտօն Տէր Գրիգորեան, Պետրոս Մելքոնմեան, Մարկոս Զալալեան, Տիրան Սարգսեան, Մկրտիչ Մանուչարեանց»: Մշակ 1907 թ. գեկտ. 4 Ն 173.

«Երախտագիտութեամբ զլուխ խոնարհեցնողներից» շատերը, երևի, քանից անգամ անցել էին Տարգովի փողոցով և գիտէին, որ զիմի վերեր, մի փոքրիկ սենեակում միայնակ ընկած է իւրեանց «մեծ նկարիչը» և որոնում է մի ընկեր, մի ծանօթ, մի խօսակից, մի մսիթարող, սակալն բոլորն էլ սպասում էին որ «նկարիչը» առաջ դիմակ դառնայ: «Դլուխ խոնարհեցնողներից» մինը—Արսէն Բալայեանցը—եթէ չեմ միսալում, նա է, որ շատ տարի առաջ, իրրև Բագուի պատգամաւոր Ներսիսեան դպրոցի լորելեանի ժամանակ Թիֆլիզում, բաղմաթիւ հանդիսականների առաջ զերմաշերմ համբոյրներ էր տալի Պերճ Պուշկեանցին: Իսկ այժմ... սորա հիւանդ ժամանակ...

Ահա մի այլ հեռագիր:

Էջմիածին 26 նոյեմբերի.

«Հեռագիրը հաղորդեց մեր սիրելի հալրենակից Պերճ Պուշկեանցի մահը: Հասարակութիւնը յանձին Պուշկեանցի ողբում է աիւր պարծանքներից մինչին: Պսակի փոխարէն որոշուած է «Պուշկեանցի անունով գրադարան-ընթերցարան հիմնել: Խընդուում ենք հանգուցեալի թաղման ժամանակ լինէք մեր ներկայացուցիչը և հասարակութեան անունից յայսնէք ցաւակցութիւն: Հոգեհանգիստ պիտի կատարուի: Աշտարակի զիւղական հասարակութեան հաւատարմատար Խաչատուր Աքոչարեանց: Վտակ. 1907 թ. նոյեմբ. 28 Ն 7».

Աշտարակի ներկալացուցիչն իւր ալս հեռագրով գիտէք ում է դիմում, Թիֆլիզի առաջնորդ Սամանդան Գարեղին արք-

եզիսկապոսին։ Համեմատեցէք Աշտարակի հեռագիրը և Պոօշեանցի կտակի պատմութիւնը, բժ. Յարութիւնեանցի ճաշկերոյթը և այլն, չետաքրքրականն այն է, որ պասկ չեն դնում, ծախս կպահանջի, դորա փոխարէն հիմնուելու է գրադարան, իսկ վերջինս կաղմելու համար դիմում են օտար քաղաքների անձանց և հաստատութիւններին, որ ծրիապէս դրեանք ուղարկեն, ուղարկեն և փող։ Ուրեմն ապագայ գրադարանը կաղմւում է օտարների փողով և գրքերով, սեփականութիւն է Աշտարակի և կրում է Պոօշեանցի անունը։ Հապա հեռագրի փողն ունից հարկաւոր է ստանալ... լարմարինը էլի Թիֆլիզի ներկայացուցիչն է...»

Այժմ կարդացէք հետեւեալ նամակը, որ տպագրուած է Մշակի մէջ № 23 Յունուարի 30, 1908

«Աշտարակ 26 Յունուարի».

«Հիմնուելիք «Պոօշեան» գրադարանի մասնաժողովի անդամներս ստանձնած լինելով մեր պաշտօնը, սորանով խնդրում ենք բոլոր այն անձերին և հիմնարկութիւններին, որոնք խոստացել են այդ գրադարանին նույիրել գրքեր կամ փող, բարեհանեն ուղարկել հետեւեալ հասցէով։ Աշտարակ, ԿНИЖНЫЙ «ՄԱԳԱԶԻՆ» „ԱՐԱԿԸ“ Կ. ԱՏՈՄՅԱԿՅ. իրաւունք ստանալու «համար դիմումն արել ենք, ուր հարկն է»։

Մասնաժողովի անդամներ կ. Աստումեան.

Մ. Թամազեան.

Հ. Չոլախեան.

Այս աստաձներս Աշտարակի մի երեսն է, միւս երեսը կարդացէք բուն աշտարակցի Յ. Արամեանի նամակը Ղամարլու գիւղից 1909 թուի Օգոստոսի 5-ից «Կոչ աշտարակցիներին» խորագրով։ Տես. «Հորիզոն» 1909 թ. № 12.

ՔԱԶԲԵՐՈՒԽԻ.

Բագու